

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՄԻՐ ՄԵՀԴԻԻ ԶԵՅՂԱՄԻ

ԷԹՆՈՆԻՄՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՊԱՐՄԻՑ  
ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (IX-XVI ԴԱՐԵՐ)

Ժ.02.06. - «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՌՀ Արևելագիտության  
ինստիտուտում:

**Գիտական ղեկավար՝** բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական** պատմական գիտությունների դոկտոր,

**ընդդիմախոսներ՝** պրոֆեսոր Ա. Պ. Փոլադյան

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Ս. Բ. Կարաբեկյան

**Առաջատար կազմակերպություն՝** Մատենադարան – Մեսրոպ  
Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հունիսի ??-ին՝ ժամը 15:00–  
ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող  
ԲԿԳԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի  
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. մայիսի ??-ին:

**Մասնագիտական խորհրդի**

**գիտական քարտուղար՝**

բանասիրական գիտությունների

թեկնածու, դոցենտ

Ն.Մ.Սիմոնյան

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

IX-XIV դդ. պարսից գրականության մեջ վկայված ցեղանունների ուսումնասիրության արդիականությունը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ այս շրջանի ցեղանվանական նյութը մինչև օրս չի ենթարկվել համապարփակ քննության: Սույն ատենախոսության միջոցով գիտական շրջանառության մեջ է դրվում ցեղանունների մասին վկայված աղբյուրագիտական նյութը՝ ըստ դասական պարսկերենով գրված գեղարվեստական և պատմական երկերի: Բացի ծագումնաբանական, բառակազմական, իմաստաբանական քննությունից, որը կարևորվում է լեզվաբանական և ցեղանունների լեզվական կարգավիճակը բացահայտելու տեսանկյուններից, ատենախոսության մեջ ցեղանունները ներկայացվում են պատմական զարգացման լույսի ներքո՝ բացահայտելով յուրաքանչյուր ցեղանվան սահմանները տարածաշրջանի ցեղանվանական համակարգում:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ատենախոսության մեջ փորձ է արվել նաև նոր լույսի ներքո ուսումնասիրել IX-XVI դարերի ավելի քան 200 տարբեր տեքստեր՝ դրանցում եղած վկայություններն առանձնացնելով ու դասավորելով ժամանակագրական հերթականությամբ: Նշենք, որ ատենախոսության նպատակն առաջին հերթին դասական տեքստերում եղած ցեղանունների ցանկի կազմումն է, իսկ այնուհետև դրանց իմաստային փոփոխությունների քննությունը: Ցեղանունների ստուգաբանության վերաբերյալ նշվել են նաև որոշ հետազոտողների կողմից արված առաջարկությունները, չնայած նման անունների ստուգաբանությունը բավական բարդ է և շատ դեպքերում չի անցնում ենթադրության սահմանը:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Արված աշխատանքի արդյունքը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Ատենախոսությունը գրելու համար նախ IX-XVI դարերի 200 տեքստերի հիման վրա կազմվել է բովանդակության միջուկը, որում վկայությունները դասավորված են ժամանակագրական կարգով: Նման մոտեցումը կարող է օգտագործվել նաև հետագա հետազոտությունների համար:

2. Նշված հիմքով դասավորվել են յուրաքանչյուր ցեղանվան կիրառության հնագույն վկայությունները: Օգտագործված տեքստերի մեծ մասը պարսից պոեզիայի և արձակի կարևորագույն օրինակներն են, իսկ

մյուս մասն ուղղակի կամ անուղղակի ձևավորվել է հիմնական տեքստերի ազդեցությամբ: Ուստի և կարծում ենք, որ աշխատանքի արդյունքն առանձնապես չի փոխվի տեքստերի շրջանակի ընդլայնմամբ:

3. Պարսից տեքստերում բազմաթիվ իրանցի և ոչ իրանցի ժողովուրդներ համարվում են Նոյի որդիների (Սեմ, Յաֆեթ, Քամ) սերունդներ. դա հստակ ցույց է տալիս սեմական ավանդույթների ազդեցությունը: Իհարկե, պետք է նշել, որ որոշ ցեղերի՝ արաբական տոհմերին վերագրելը (օրինակ՝ deylam ցեղի վերագրումը Banī-Dabba տոհմին) ավելի շատ բխում է այդ աշխատությունների հեղինակների արաբամոլությունից կամ ժամանակաշրջանի իշխող ոգուց, քանի որ Իրանի նվաճումից ու իրանցիների կողմից իսլամի ընդունումից հետո արաբական ծագում ունենալն ու արաբական տոհմերին պատկանելը պատիվ ու հպարտություն էր ոմանց համար:

4. Պարսից լեզվում ցեղանունները, ըստ կառուցվածքի, բաժանվում են երկու խմբի՝ պարզ և ածանցավոր: Ածանցավոր ցեղանուններում նկատվում է միայն *yā-i nisbat* վերջածանցը: Այս առումով որոշ էթնոնիմների կառուցվածքը նման է դեմոնիմների (Demonyim). այսինքն՝ դրանք կազմվում են տեղանուններին *ya-i nisbat* ավելացնելով: Իհարկե, շատ դեպքերում թվում է, թե բառին հավելյալ իմաստ տալու կամ պարսկերեն դարձնելու համար մի շարք ցեղերի անվան վերջում ավելացվել է *yā-i nisbat*: Ուստի պարսկերենում ցեղանունները բարդ կառուցվածք չունեն: Ցեղանունների համար տարբեր ձևերի առկայությունը հիմնականում պարսկա-արաբական գրի ազդեցության արդյունք է:

5. Որոշ ցեղանուններ իմաստային փոխակերպման են ենթարկվել և սկզբնական իմաստից բացի՝ այլ նշանակություն են ձեռք բերել: Օրինակ, բացի էթնիկական իմաստից՝ *hindū* ցեղանունը գործածվել է նաև «ստրուկ, նաժիշտ, սևամորթ» իմաստներով, կամ *deylam* բառը ստացել է «պահապան» իմաստը: Ցեղանունների մի այլ մասի դեպքում դրանք ի սկզբանե վերաբերել են նրանց կենսակերպին, բնակության վայրին կամ առանձնահատկություններին՝ աստիճանաբար ստանալով էթնիկական նշանակություն: Օրինակ, *kurd* ցեղանունը, օգտագործվելով միայն «հովիվ, անասնապահ, քոչվոր» իմաստներով, հետագայում դարձել է ցեղանուն: Ուստի տեքստերը վերընթերցելիս ու մեկնաբանելիս չպետք է ուշադրություն դարձնել միայն ցեղանվան սկզբնական նշանակությանը:

Այսպիսով, շատ ցեղանունների պարագայում կարելի է առանձնացնել՝ ա. հիմնական կամ էթնիկական նշանակություն, բ. երկրորդական կամ հավելյալ նշանակություն, այսինքն՝ երկրորդական զարգացման արդյունքում ձեռք բերված ածականական իմաստ: Երկրորդական

Նշանակությունը կարող է լինել պատմալեզվական, գաղափարախոսական, խորհրդանշական, կրոնադավանական: Երկրորդային իմաստների ձևավորումը կարող է ծագել ժողովրդի արտաքին հասկանիշներից, սովորույթներից, կրոնական համոզմունքներից ու կենսակերպից: Մեր կարծիքով ցեղանունների իմաստափոխության գործում կարևորագույն գործոնը գաղափարական փոփոխություններն են եղել:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հայագիտության և իրանագիտության մեջ տարածաշրջանի ցեղանվանական նյութը դեռևս չի ենթարկվել համապարփակ քննության՝ մասնավորապես անհրաժեշտ աղբյուրագիտական հենքով: Սույն ատենախոսության միջոցով գիտական շրջանառության մեջ է դրվում վկայված ցեղանունների աղբյուրագիտական նյութը՝ ըստ դասական պարսկերենով գրված գեղարվեստական և պատմական երկերի: Գեղարվեստական նկարագրությունների մեջ ցեղանունների իմաստային գործառույթը թերևս ամենաքիչ ուսումնասիրված ոլորտներից է: Ատենախոսության նյութն ու արդյունքները գործնականում կարող են նպաստել ցեղանվանագիտության՝ իբրև բառագիտության մի առանձին բաժնի ուսումնասիրությանը. փաստորեն, այս աշխատանքն առաջին նմանատիպ փորձն է այդ ոլորտում: Ցեղանվանացանկի հիման վրա հետագայում կարող է կազմվել ցեղանունների բառարան:

#### **ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվել են պարսից դասական տեքստերը IX դարի սկզբից մինչև XVI դարի վերջը: Ուսումնասիրությունը ներառում է շուրջ 200 գրական և պատմական տեքստեր: Փորձել ենք այդ տեքստերում գտնել յուրաքանչյուր ցեղանվան օգտագործման հնագույն վկայությունը՝ հնարավորության դեպքում ցույց տալով բառի իմաստային փոխակերպումը: Ամենահին ու ամենակարևոր վկայությունները մեջբերված են էջերի ծանոթագրություններում: Վկայությունների թարգմանությունից խուսափել ենք, որովհետև թարգմանության մեջ իմաստային մանրամասները կորչում են և բովանդակությունը դարձնում անհասկանալի: Այն դեպքերում, երբ խնդրո առարկա ցեղանունը նշված ժամանակահատվածում հնչյունական ու իմաստային փոփոխության չի ենթարկվել, բավարարվել ենք հնագույն վկայությունները նշելով, սակայն բառի հնչյունական և իմաստային փոփոխության պարագայում բազմաթիվ վկայություններ ենք քաղել տարբեր աղբյուրներից:

Հարկ է նշել, որ այս ուսումնասիրության հիմքը միայն պարսից դասական տեքստերն են: Խնդրի առավել ընդգրկուն հետազոտությանը կարող է նպաստել նաև արաբական տեքստերի ուսումնասիրությունը: Ցեղանունների հիմնական կազմը ներկայացնելիս կիրառել ենք նաև նկարագրական մեթոդը:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվել են պարսից դասական տեքստերը IX դարի սկզբից մինչև XVI դարի վերջը:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը քննարկվել է ՀՌՀ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում և երաշխավորվել է պաշտպանության:

### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

#### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացվում են ընդհանուր տեղեկություններ ցեղանվանագիտության վերաբերյալ: Քննվում է ցեղանվանագիտությունը հատկանվանագիտության մի առանձին բաժին դիտարկելու տեսակետը՝ ի տարբերություն ավանդաբար ընդունված մոտեցման, համաձայն որի՝ ցեղանունների ուսումնասիրությունը դիտարկվում է անձնանվանագիտության շրջանակներում: Քննվում են նաև ցեղանունների ուսումնասիրության դժվարությունները պարսից տեքստերում:

#### **ԳԼՈՒԽ I. ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

Ատենախոսության առաջին գլխում քննվել են 72 ցեղանուններ, որոնք վկայվել են IX-XVI դարերի պարսկերեն գեղարվեստական և պատմական երկերում: Ցեղանունների ցանկը կազմվել է ըստ դրանց վկայվածության ժամանակագրության, իսկ աշխատանքում դրանք դասակարգվել են այբբենական կարգով: Տրվել են յուրաքանչյուր ցեղանվան վկայված հնչյունական տարբերակները, պատմական և բնագրային համատեքստերը, որոնք հավելյալ նյութ են այդ ցեղանունները պատմական կտրվածքով հետազոտելու համար: Ատենախոսության այս գլխում բերված նյութը մասամբ ենթարկվել է նաև մշակութաբանական քննության, որն, անշուշտ, բարձրացնում է աշխատանքի գիտականությունը:

1.1. **Abxāz:** Abxāz-ները (ինքնանվանում՝ apsuա կամ apsnո), կովկասյան ժողովուրդ են, որոնք բնակվում են Սև ծովի արևելյան ափին և դասական հեղինակների կողմից հիշատակվում են որպես abasgoi (Արիանոսի կողմից) կամ abasgi (Պլինիոսի կողմից): Այս ցեղանունն արաբական

տեքստերում հանդիպում է *abxaz/abxāz/abxās/afxāz* ձևերով, իսկ հայերեն աղբյուրներում՝ *ափշփղջ/ափխազք* ձևերով: Առաջին անգամ *Abxāz* (Աբխազիա) և *abxāz* (աբխազ) տերմինները վկայված են XI դարի բանաստեղծ *Qatrān Tabrizi*-ի կողմից: Ժամանակագրական առումով *Abxāz/Abxāzi* հաջորդ վկայությունը կրկին հանդիպում է XI դարում՝ *Faxr al-Dīn As'ad Gurgāni* ի *Vis u Rāmīn*-ում:

1.2. **‘Ād:** ‘Ād-ը հին արաբական մի ցեղի անունն է, որտեղ մարգարեությունը տարածելու համար Աստված ընտրեց *Hūd* անունով մի մարդու: Այս ժողովրդի անունը Ղուրանում հիշատակվում է 24 անգամ, և թվում է, թե նրանց բնակության վայրը եղել է *Ahqāf* տարածաշրջանում (Օմանի և Եմենի միջև): Այս ցեղի անունն առաջացել է Նոյի ժառանգներից մեկի անունից: Ըստ Ղուրանի՝ այդ մարդիկ եղել են անհավատներ ու հեթանոսներ, ուստի և Աստված որպես նրանց մարգարե ընտրեց *Hūd*-ին: ‘Ad ազգի պատմությունը, ի լրումն Ղուրանի պարսկերեն թարգմանությունների և մեկնությունների, արտացոլվել է բանաստեղծների և գրողների երկերում: ‘Ad ցեղանունն առաջին անգամ հանդիպում է X դարում *Tārix-i Bal‘amī*-ի մեջ:

1.3. **Afṡān/Avṡān/Afṡāni/Avṡāni:** *Afṡān* անվանաձևը, հավանաբար, հնագույն ժամանակներից օգտագործվել է փոշյուներին մատնանշելու համար: *Afṡān* ցեղանունն առաջին անգամ հիշատակվում է X դարում *Hūdūd al-‘ālam* աշխարհագրական տեքստում: XI դարից սկսած՝ ցեղանունը բազմիցս հանդիպում է պարսից տեքստերում, ինչպիսիք են՝ *Abul-Faraj Rūnī*-ի *Dīvān*-ը (*afṡān* ձևով), ապա *Farruxī Sistānī*-ի բանաստեղծությունները (*afṡāni* (*afṡān* + *yā*-i *nisbat*) ձևով): *Afṡān* անվանումն արտաքին առումով բավական իրանական հնչողություն ունի, և կարելի է ենթադրել, որ անունը կարող է կապված լինել *ad hoc* տերմի հետ, որը որպես մականուն տրվել է այլ իրանախոս ժողովուրդներից մեկի կողմից իրենց հարևաններին մատնանշելու համար: Այս դեպքում, թերևս, լավագույն թեկնածուն, որ կարող էր վարվել նման կերպ, բակտրիացիներն են՝ տարածաշրջանի ամենահզոր և մշակութային առումով ամենազարգացած ժողովուրդը: Վերջերս հայտնաբերված չորս փոքր բեկորային փաստաթղթերում՝ *αβγανο*, *αβγανο*, իսկապես առկա է նման անուն, որը աֆղաներենի ամենահին վկայությունը հասցնում է մինչև IV դարի վերջ: Հետևաբար կարելի է ենթադրել, որ այս. *afṡān*-ը կարող էր զարգանալ ավելի հին \**abṡān* < *Bactr.* *αβγανο* ձևից: Նախնական \**abṡān*-ը, կախված շեշտադրումից, հնարավոր է՝ դարձել է կամ *β/φ* *iyāṡān* (չշեշտված -i իրականում *shwa* է), կամ *áwṡān*՝ *áfṡān*:

1.4. **‘Ajām/‘Ajāmī/A‘jam/A‘jamī:** ‘Ajām/A‘jamī բառն արաբերեն է, որն ի սկզբանե ունեցել է «համր և լեզվակապ» նշանակությունը: Հետագայում իրանցիներին արաբները սկսեցին կոչել *ajām*, քանի որ նրանց կարծիքով վերջիններս զերծ էին պերճախոսությունից: Իհարկե, այս տերմինը կիրառվում է նաև բոլոր ոչ արաբ ազգերին հիշատակելիս՝ անկախ նրանց իրանցի կամ ոչ իրանցի լինելու հանգամանքից: ‘Ajām բառն առաջին անգամ հանդիպում է IX դարի բանաստեղծներից մեկի՝ Bassām Kūrd-ի պոեզիայում, իսկ դրանից հետո այն բազմիցս հանդիպում է հետագա դարերի պարսից պատմական ու գրական տեքստերում, այդ թվում՝ *Tārix-i Bal‘mī*-ում և *Tārix-i Sistān*-ում (X դ.): Abū-Sa‘d Maydānī-ն (XI դ.) *Al-Ismi‘ī al-asmā’* գրքում *al-ajām*-ը և *al-‘ujm*-ը կիրառում են «ոչ արաբ» նշանակությամբ:

1.5. **Alānī/Ālānī:** Alān-ները հնագույն իրանական հյուսիսային խմբի ցեղերից էին, որոնք հիշատակվել են առաջին դարի հեղինակների կողմից: Այս ցեղանունը հունարենում հանդիպում է Αλανοι ձևով, իսկ լատիներենում՝ Alani և Halani: Իրանցի լայնները, որոնք հետագայում կոչվեցին *ās*, այսօրվա օսերի նախնիներն էին: Այս բառն առաջին անգամ տեղանվան իմաստով հայտնվում է X դարում Alān/Ālān ձևերով *Tārix-nāma-yi Tabarī* և *Hudūd al-‘ālam* գրքերում ու Alānān (տեղանվանակերտ *-ān* վերջածանցով) ձևով *Šahnāma*-ում: Nižāmī Ganjā‘ī-ն մի քանի անգամ հիշատակել է Ālān տարածքը և նրա բնակիչներին՝ Ալեքսանդր Մակեդոնացու և ռուսների միջև տեղի ունեցած պատերազմի համատեքստում (*Šaraf-nāma* գրքում):

1.6. **‘Arab:** ‘Arab ցեղանունն առաջին անգամ հանդիպում է IX դարի բանաստեղծ Bassām-ի Kūrd-ի պոեզիայում, իսկ Bal‘amī-ն (X դ.) մանրամասնորեն պատմել է իրանցիների հետ նրանց վարած պատերազմների մասին: Աղբյուրներն այս ցեղին համարում են Նոյի որդի Սեմի հետնորդները: ‘Arab բառը հոմանիշ է *tāzi* անվանը, որը մենք կրնենք ստորև: Հարկ է նշել, որ *a‘rābi* բառը նշանակում է «բեդուին արաբ»:

1.7. **Armani:** Armani (հայ) բառը օտարների կողմից հայերին տրվող ամենատարածված անվանումն է, բայց պարսից դասական գրականության և իրանական պատմագրության մեջ *arman* բառը վերաբերում է Հայաստանին ու Հայոց երկրին: Այս տերմինն առաջին անգամ հանդիպում է XI դարում Farruxī Sistānī-ի (XI դ.) և Qatrān Tabrizī-ի (XI դ.) պոեզիայում: Պարսից պատմագրական տեքստերում *Arminiya/Armaniya* տեղանունը Հայաստան երկրի վերաբերյալ կիրառվող հնագույն ու ամենատարածված անունն էր: Տեղանունն առաջին անգամ հիշատակվում է *Hudūd al-‘ālam* գրքում (X դ.), որը



պարսկերեն լեզվով գրված աշխարհագրական հնագույն գործն է, ինչպես նաև Firdausi-ի *Šāhnāma*-ում (X դ.): Armani-ն՝ «հայ» իմաստով, առաջին անգամ գործածվել է X դարի այնպիսի գործերում, ինչպիսիք են *Tarjama-yi tafsir-i Tabarī*, *Hudūd al-‘ālam* և *Šāhnāma*: XVII դարի սկզբից, պարսկահայ բնակչության աճով, այս ժողովրդի անունը, իր սկզբնական իմաստի հետ զուգահեռ, աստիճանաբար ստանում է կրոնադավանական նշանակություն ու վերաբերում է քրիստոնյա ազգաբնակչությանը:

**1.8. Banī-Isrā’īl:** Այս ցեղանունը կազմված է երկու բառից՝ *banī/banū* և *Isrā’īl*: *Banī/banū*-ն *ibn* բառի հոգնակի ձևն է, որ հաճախ նշանակում է «արական սեռի որդիներ», իսկ *Isrā’īl*-ն՝ Իսահակ (*Ishāq*) մարգարեի որդու՝ Հակոբի (*Ya‘qūb*) տիտղոսն է, որը երկու անգամ հիշատակվում է Ղուրանում: *Banī-Isrā’īl* ցեղը բաղկացած էր տասներկու ընտանիքներից, որոնք համարվում են Հակոբի տասներկու որդիների ժառանգները: *Banī-Isrā’īl*-ի պատմությունը սկսվում է նրանց նախահայր Աբրահամի (*Ibrāhīm*) ժամանակից: *Banī-Isrā’īl* բառը մեքքայական այաներում (*āyāt-i Makkī*) օգտագործվում է 22 անգամ, իսկ Ղուրանի Մեդինայական այաներում (*āyāt-i Madanī*)՝ 19 անգամ: *Isrā’īl* բառի սիրիերեն կամ թե եբրայերեն ծագման մասին տարբեր կարծիքներ են հնչել: *Banī-Isrā’īl* տերմինն ու այս ժողովրդին վերաբերող պատմությունները պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հիշատակվել են X դարում *Tārīx-i Bal‘amī* գրքում, իսկ դրանից հետո բազմիցս հիշատակվել են Ղուրանի թարգմանություններում ու մեկնություններում:

**1.9. Barbar:** *Barbar*-ը հյուսիսային Աֆրիկայում ապրող ցեղերի ընդհանուր անվանումն էր, որոնք ցրված էին Ատլանտյան օվկիանոսի ափերից մինչև աֆրիկյան անապատներ: Պարսից դասական գրականության մեջ այս անունը կիրառվում է բերբերների նկատմամբ, երբ նշվում է այն երկիրը, ուր նրանք ապրում էին: Նման հիշատակմամբ տվյալ ցեղի և երկրի անունը, սկսած X դարից, բազմիցս հանդիպում է պարսից գրականության մեջ: *Barbar*-ը իրականում արտանվանում (էկզոթեթնոնիմ) է, այսինքն՝ այս ցեղին ուրիշների կողմից տրված անուն է, իսկ նրանց ինքնանվանումը (էնդոթեթնոնիմ կամ ավտոթեթնոնիմ) *āmāziy-ն* է: *Barbar* բառը հույների և հռոմեացիների մոտ ստորացուցիչ նշանակություն ուներ՝ հիմնականում կիրառվելով օտարերկրացիների և ոչ հույների նկատմամբ, սակայն պարսից գրականության մեջ ցեղանունը չի օգտագործվում նվաստացուցիչ իմաստով: Ավելին, պարսից պոեզիայում այս ցեղի մարդկանց գեղեցկություն ու գրավչություն է վերագրվել:

**1.10. Bijnāk:** Bijnāk-ները Միջին Ասիայի թյուրքական ցեղերից էին, որոնք որոշ ժամանակ ապրել են նաև Հին Ռուսիայի հարավում և Փոքր Ասիայում: Հույն հեղինակներն այս ցեղի անունը հիշատակել են Πατζίάκοι կամ Πατζινάκoi ձևերով, իսկ բյուզանդական շրջանի հեղինակները՝ Patzinakoi և Patzinakitai: Վրացերենում ցեղանունը արձանագրվել է pacanik-i, իսկ հայերենում՝ *պածինակ* տարբերակներով: Պարսից դասական տեքստերում այս ցեղանունը հանդիպում է bijnāki (Bijnāk + yā-i nisbat) (հմմտ. արաբ. bijnāk; biājnāk) ձևով: Նշված բոլոր ձևերը ծագել են badjanak բառից, որը հին սլավոներենում (հմմտ. ռուսերեն՝ Печенег) անոչվում է pashenog բառին և նշանակում է «in-law related clan or tribe»: Թուրքերեն բառարանի հեղինակը Kāšyari-ն ցեղի անունը տալիս է bajanak տարբերակով: Ոմանք այս ժողովրդի անունը ծագած են համարում թոխարերեն kank բառից, որը նշանակում է «քար»:

**1.11. Bulγār:** Bulγār անունը (հունարեն՝ Βούλγαρος) շատ լեզուներով ցեղանուն է, բայց իրանական պատմագրության և պարսից դասական գրականության մեջ Bulγār տերմինը վերաբերում է այս ժողովրդի բնակության վայրին, որտեղ ապրող ժողովուրդը bulγāri (Bulγār + yā-i nisbat) է կոչվում: *Hudūd al-‘ālam* գրքում Bulγār-ը նկարագրվում է որպես Վոլգա գետի երկայնքով ձգվող փոքր տարածք, որի բնակիչները մահմեդականներ էին: Bulγāri տերմինն առաջին անգամ հանդիպում է XI դարի բանաստեղծ Manūčehri Dāmyāni-ի դիվանում: Ընդհանրապես bulγāri-ները պարսից գրականության ու իրանական պատմագրության մեջ եղել են սպիտակության և գեղեցկության խորհրդանիշ:

**1.12 Čayān/Čayāni:** Čayāniyān տարածքը գտնվում էր Փոքր Ասիայում՝ Ĵayhūn գետի աջ ափին: Այս երկրամասի անունն առաջին անգամ հիշատակվում է X դարում *Tārix-nāma-yi Tabari*-ում և *Hudūd al-‘ālam*-ում: Այն երբեք չի օգտագործվել ցեղանվան իմաստով, չնայած որոշ պատճառներով ենթադրվում է, որ čayān բառը ցեղանուն է՝ նաև կապված հեփթաղների հետ: Ըստ Մարկվարտի՝ Čayāniyān անունը հավանաբար ունի մոնղոլական արմատ և գալիս է «սպիտակ» նշանակող čayān բառից:

**1.13. Čayātāy/Čayātāyi/Ĵayātāyi:** Այս ցեղանունը ծագել է Չինգիզ խանի երկրորդ որդու՝ Čayātāy-ի անունից, որը, հոր կտակի համաձայն, ժառանգել է Տրանսօքսիանան (բացի Խվարազմից): Նրա ժառանգները կառավարել են այս տարածքը և հայտնի են դարձել արդեն čayātāy-ներ ցեղանունով: Այնուհետև այս անունը դրվել է Միջին Ասիայի բոլոր թյուրքերի և թյուրքախոս քոչվորների վրա: Այս

ցեղանունն առաջին անգամ հանդիպում է XV դարում *Ḍubdat al-tavāriḫ*-ում , իսկ հետո XVI դարում՝ *Jāhāngusāy-i xāqān* և *Sulūk al-mulūk* գրքերում:

**1.14. Čarkas:** Čarkas-ները հյուսիսարևմտյան Կովկասի ցեղերից են, որոնք այժմ բնակվում են Ռուսաստանի Դաշնության Կուբանի երկրամասում: Čarkas-ներն իրենց անվանում են *adiqe* կամ *šarjas*: Պարսից դասական տեքստերում այս անունը հանդիպում է միայն որպես *čarkas* (հմմտ. արաբ. *ĵarkas, ĵaharkas*): Թվում է՝ X դարում պարսիկները, արաբներն ու վրացիներն այս ժողովրդին անվանում էին *kašak*-ներ: *Kašak*-ը կարծես վրացական անուն է և ըստ երևույթին առաջացել է օսերեն *kasagi* բառից: Պարսից գրականության մեջ այս ժողովրդի անունն առաջին անգամ հանդիպում է XIV դարում՝ *Aziz Astar-ābādī*-ի *Bazm va razm* գրքում և *Rašid al-Dīn Faḍlullāh*-ի *Jāmi' al-tavāriḫ*-ում:

**1.15. Čigili:** Čigil-ը հին Թուրքեստանի քաղաքներից մեկի անունն էր, որը պարսից հին գրականության մեջ հաճախ հանդիպում է Չինաստան (Արևելյան Թուրքեստան) երկրի անվան հետ: Čigil-ը մոնղոլերենում նշանակում է «շատ աղբյուրներով հարուստ վայր»: Čigil երկրի ու նրա ժողովրդի անունն առաջին անգամ պարսից դասական գրականության մեջ հիշատակվել է X դարում *Ḥudūd al-‘ālam* և *Šāhnāma* գործերում: Պարսից գրականության մեջ *čigili*-ները համարվում էին գեղեցկության խորհրդանիշ:

**1.16. Deylam/Daylam:** Գիլանի տարածքի լեռնային մասը, որն աշխարհագրական սկզբնաղբյուրներում անվանվում է *Deylam*, իր անունը ստացել է այս տարածքում ապրող հին ցեղերից: *Deylam* բառն առաջին անգամ հանդիպում է X դարի աղբյուրներում, ինչպիսիք են *Tāriḫ-nāma-yi Tabarī*-ն, *Ḥudūd al-‘ālam*-ը և *Šāhnāma*-ն: Իսկ դրանից հետո այն բազմիցս հանդիպում է հետագա դարերի պարսից պատմական և գրական տեքստերում, այդ թվում՝ *Bahman-nāma*-ում, *Tāriḫ-i Bayhaqī*-ում ու *Tāriḫ-i Sistān*-ում: Արաբերեն բառարաններում *daylam* բառը, բացի «ցեղանվանական» իմաստից, կիրառվում է նաև այլ իմաստներով: Սակայն պետք է հասկանալ, որ պարսից լեզվի մեջ այս բառը արտասանվում է ոչ թե *daylam*, այլ *deylam* և նշանակում է «պահապան» (*nigah-bān*), նաև «բանտապահ» (*zindān-bān*):

**1.17. Dihqān:** *Dihqān* բառը, բացի «տանտեր, հողագործ, գյուղացի» և այլ հայտնի իմաստներից, մինչև XII դարի կեսերը գործածվել է նաև «պարսիկ» կամ «իրանցի» բացարձակ իմաստներով՝ հետևաբար ունենալով նաև էթնիկական նշանակություն: Բառի՝ «իրանցի» իմաստով գործածության առաջին վկայությունը կարելի է տեսնել X դարում

Šahnāma-ում, որի կապակցումը tāzi և rūmī բառերի հետ էլ ավելի ակնհայտ է դարձնում նրա էթնիկական նշանակությունը:

**1.18. Farang /Faranj /Farnḡi:** Farang-ը (Farangistān, Ifranja) վերաբերում էր rub‘-i maskūn-ի՝ երկրագնդի հյուսիս-արևմուտքում գտնվող մի ընդարձակ տարածության, որտեղ մուսը գործելու միջանցքը համարվում էր Հայաստանը: Այս ցեղանունը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ օգտագործվել է XI դարում՝ farang և faranjī ձևերով, իսկ դրանից հետո հաճախակի հանդիպում է farang, farangī տարբերակներով: Farang-ը Ֆրանկ (franc) բառի պարսկականացված ձևն է, իսկ faranj-ը՝ farang բառի արաբականացված ձևը:

**1.19. Gabr/Gabrak/Gavr:** Դասական շրջանի պարսից գրականության մեջ gabr բառը շատ դեպքերում օգտագործվում է «գրադաշտական» կամ «կրակապաշտ» իմաստներով: Gabr բառը նաև gabrak ձևով է գործածվել պարսից գրականության մեջ: Հակառակ տարածված կարծիքի՝ gabr բառը ստորացուցիչ նշանակություն չունի: Հաճախ gabr բառի առաջացումը կապել են արամեական gabra՝ «մարդ», բառի նշանակության հետ, որը պահլավերեն huzvāriš-ներում փոխարինվում է mart «տղամարդ» բառով:

**1.20. Farča/Farja:** Farča/Farja-ն այն ցեղի անունն է, որն ապրում էր Farčistān/Farjīstān/Faršīstān լեռնային շրջանում՝ Քարուլի և Հերաթի միջև (ներկայիս Աֆղանստանում): Farča բառն առաջին անգամ հանդիպում է X դարում Munjīk Tirmīdī-ի մոտ ու նշանակում է «իզացյալ» (moxannaθ, nāmard): Այս բառը բազմիցս օգտագործվել է տարբեր տեքստերում թե՛ ցեղանվան իմաստով, թե՛ այլ իմաստներով: Farča բառը սկզբում ունեցել է «լեռնաբնակ» իմաստը՝ բնութագրելով մշակութային ու քաղաքակրթական զարգացման առումով ցածր մակարդակի վրա գտնվող ցեղերին: Այս բառը լեռնային մարդկանց միամտության պատճառով քաղաքաբնակների կողմից աստիճանաբար կիրառվեց նաև «ապուշ և տգետ» իմաստներով:

**1.21. Gēl/Gēli/Gelak/Gelaki/Gilāni:** Gēl/Gēlak-ը (հմմտ. Γελοι) Իրանի հյուսիսում՝ Կասպից ծովի ափերին ապրող ցեղի անունն է: Այս ցեղանունն առաջին անգամ հիշատակվել է X դարում՝ gēl/gēli/gelak ձևերով *Tārix-nāma-yi Tabarī* և *Šahnāma* գրքերում: Այն տարածքը, որտեղ ապրում էր այս ցեղը, տեքստերում գրանցվել է Gēl և Gēlān անուններով՝ նույնպես սկսած X դարից: Gilānī (Gilān + yā-i nisbat) բառն առաջացել է ավելի ուշ շրջանում ու հանդիպում է XV դարից հետո միայն:

**1.22. Gurgsār:** Gurgsārān-ը Բալխում գտնվող մի գյուղի անունն էր: *Šahnāma*-ում այս վայրը բազմիցս հիշատակվում է, իսկ Gurgsārān

տեղանունը հաճախ նշվում է *Māzandarān*-ի հետ: Չնայած գրեթե ոչ մի աղբյուրում *gurgsār*-ը որպես ցեղանուն նշված չէ, *Šāhnāma*-ում երկու տող կարելի է գտնել, որի ենթատեքստը հավանական է դարձնում *gurgsār*-ի՝ որպես ցեղանուն գործածված լինելու փաստը: *Gurgsārān* անվանումը կազմված է *gurg+sār* + *-ān* (տեղանվանակերտ *-ān* վերջածանց) բառերից: Եթե *gurgsār*-ի *-sār* բաղադրիչը համարենք որպես *sar* (գլուխ) բառի մի տեսակ, ապա *gurgsār*-ը պետք է մեկնաբանել որպես «գայլագլուխ»՝ գայլի նման գլուխ ունեցող մարդիկ:

**1.23 Gurj/Gurji:** *Gurji* ցեղանունն (ինքնանվանումը՝ քարթվելի) առաջին անգամ հանդիպում է XI դարում *Lāmi'i Gurgāni*-ի և *Nāšir Xusaru*-ի մոտ: Ինչպես երևում է հին տեքստերի վկայություններից, *gurj* բառը (առանց *yā-i nisbat*-ի) կիրառվում է ինչպես նշված մարդկանց, այնպես էլ նրանց բնակատեղին շեշտելու առնչությամբ: *Gurjistān* «Վրաստան» տեղանունը պարսից պոեզիայում վկայված է սկսած XI դարից:

**1.24. Hindū/Hindi:** *Hindū* ցեղանունն առաջին անգամ հիշատակվում է X դարում՝ *Tārix-nāma-yi Tabarī*-ի և *Hudūd al-'ālam* գրքերի մեջ: Քանի որ *hindū*-ները հիմնականում ստրուկներ էին, բառը աստիճանաբար ստացել է «ստրուկ» իմաստը, և XII դարից սկսած՝ *Hindū* բառը պարսկերեն տեքստերում հաճախ նշանակում է ուղղակի «ստրուկ»: Պարսից տեքստերում հաճախ հակասություն կա *hindū* և *turk* բառերի միջև, որովհետև պարսից գրականության մեջ *turk*-երը գեղեցկության և սպիտակության խորհրդանիշ են՝ հակառակ *Hindu*-ների, որոնք տգեղության ու սևամորթության խորհրդանիշ են համարվել:

**1.25. Īrāni:** *Īrāni*-ն հին Պարսկաստանի (*Īrānšahr*-ի) աշխարհագրական տարածքում ապրող մարդկանց ամենատարածված ցեղանվանումն է: Պատմության ընթացքում իրանցիներն իրենց միշտ ճանաչել են այս ցեղանունով: Գրեթե վստահորեն կարելի է ասել, որ այս ցեղանունը շարունակաբար օգտագործվել է X-XVI դարերի տեքստերում: Իհարկե, XVI դարից ի վեր նշված ցեղանվան գործածությունն աստիճանաբար ավելացել է: *Īrāni* (իրանցի) ցեղանունն առաջին անգամ հանդիպում է X դարում *Tārix-nāma-yi Tabarī*-ում և *Šāhnāma*-ում: Ոչ մի տեքստում իրանցիների մասին այնքան հիշատակում չկա, որքան *Šāhnāma*-ում, իսկ դրա պատճառը լիովին պարզ է. *Šāhnāma*-ն իրանցիների ազգային էպոսն է և հիշեցնում է իրանցի ժողովրդի միասնությունն ու համերաշխությունը՝ ընդդեմ դիվային թշնամիների ներխուժման:

**1.26. Iramāni (Ārāmī):** Այս ժողովրդի մասին հիշատակվում է միայն *Tārīx-i Bal'ami*-ի մեջ (X դար) և *Mujmal al-tavāriḫ va al-qisṣa*-ում (XII դար): Ըստ *Tārīx-i Bal'ami*-ի՝ պարթևներից հետո նրանք հաստատել են Iramāni կոչվող թագավորությունը, ծագում են 'Ād-ի և Թամūd-ի սերունդներից, իսկ 'Ād-ն էլ Iram-ի որդին էր: Bal'ami-ն հաղորդում է նաև, որ այսօր Իրաքի գյուղերում և քաղաքների շուրջն ապրող Nabat-ները նույն iramāni-ների ժառանգներն են, որոնք արաբների կողմից իրենց թագավորության կործանումից հետո ցրվել են գյուղերում ու անցել գյուղատնտեսության:

**1.27. Irmāni:** Irmāni-ն մի ժողովրդի անուն է, որը բնակվում էր Irmān-ի տարածքում: Irmān-ի երկրի անունն առաջին անգամ հիշատակվում է *Hudūd al-'ālam* ու *Šāhnāma* գրքերում, և, ինչպես պարզվում է, Իրանի ու Թուրանի սահմանին գտնվող երկրամասի անունն էր: *Šāhnāma*-ում (Bižan u Maniže-ի պատմվածքում) Irmān-ին նաև քաղաք է Իրանի և Թուրանի սահմանին, որը գտնվում է վայրի խոզերով առատ մի անտառի մոտ:

**1.28. Ĵarmā:** Ĵarmā-ները մոնղոլական ցեղերից էին, որոնք Արդուն խանի օրոք հաստատվել են Kirmān-ի շրջակայքում՝ աստիճանաբար ուժեղանալով ու աճելով: Նրանք սկզբում հիշատակվում են *Tārīx-i guzida*-ում (XIV դար), այնուհետև *Ĵuyrāfiyā-i Hafiz Abrū*-ի և *Raudat al-ṣafā*-ի մեջ (երկուսն էլ՝ XV դարի աշխատություններ):

**1.29. Ĵat/ Ĵāt → St'u' Zutt**

**1.30. Ĵuhūd/Yahūd:** Ĵuhūd/Yahūd-ները (հրեաները) էթնիկ-կրոնական խումբ են, որոնք համարվում են Bani-Isrā'īl-ի հետնորդները: Այս եզրույթը տեքստերում հիշատակվել է բացասական ածականների հետ միասին, ինչպիսիք են՝ չարամիտ, շուն և այլն: Տեքստերում yahūd բառի ծագման մասին հիմնականում կան ժողովրդական ստուգաբանություններ: Այսպես, օրինակ, Yahūd-ը համարվում է արաբերեն tahawwad անորոշ դերբայից առաջացած եզրույթ, որը նշանակում է «շարժվել», իսկ որպես բացատրություն նշվում է հրեաների՝ «Թորա» կարդալիս շարժվելու հանգամանքը: Կամ որ այս ժողովրդի Yahūd անունը բացատրվում է նրանց Yahūdā b. Ya'qūb-ի զավակները լինելու հանգամանքով: Կարելի է ասել, որ պարսից դասական գրականության մեջ juhūd/yahūd եզրույթը զուրկ է որևէ դրական իմաստից՝ հաճախ օգտագործվելով kafir «անհավատ» և «աստվածամերժ» իմաստներով:

**1.31. Kimāk:** Kimāk-ը հին Թուրքեստանում գտնվող քաղաքի, ինչպես նաև թյուրքական ցեղերից մեկի անվանումն է: Այս ցեղի և նրա տարածքի անունն առաջին անգամ հիշատակվում է *Hudūd al-'ālam*-ում

(X դ.) և *Zayn al-axbār*-ում (XI դ.): Մարկվարտը *Kimāk* (թուրք. *kimäk*) անվանումը համարում է *iki-imäk* (նշանակում է «երկու *imäk*») բառի հապավում:

**1.32. Kauli:** *Kauli*-ն Հյուսիսային Հնդկաստանում բնակվող խմբի անունն է, որոնք իրենց հայրենիքից ժամանակին գաղթել են Իրան և այլ երկրներ՝ զբաղվելով այնպիսի գործունեությամբ, ինչպիսիք են երգեցողությունը, գուշակությունը (*fālbīnī*), մանրածախ առևտուրը: Իրանում *Kauli*-ներին տրված ամենահին անունը *lūrī*-ն է: Ըստ Մինորսկոյ՝ *Kauli*-ները ծագում են հավանաբար *Arūr* կամ *Arōr* քաղաքից (արաբ.՝ *al-Rūr*), Մուլթանից 30 մղոն հարավ-արևմուտք, և հնագույն մայրաքաղաք Սինդից: *Lūrī* անունը պարսից գրականության մեջ հանդիպում է X դարից մինչև XIV դար: *Lūrī* տերմինն էլ, անկասկած, *Lūrī* բառի մեկ այլ ձևն է՝ *r > l* հնչյունափոխությամբ: Այս բառը ոչ մի կապ չունի *lūrī* բառի հետ, որը նշանակում է «անամոթ»:

**1.33. Kūč:** *Kūč* ցեղանունն առաջին անգամ հանդիպում է X դարում *Šāhnāma*-ում՝ *balūč* ցեղանվան հետ մեկտեղ: Որոշ հետազոտողների կարծիքով *Kūč*-ն ու *Balūč*-ը նշված հատվածում վերաբերում է *kūč-u-balūč* երկրամասին՝ արտահայտելով ավելի շատ այս ցեղերի բնակության վայրը, քան ցեղերին: *Kūč* ցեղանունն արաբերեն և պարսկերեն հին տեքստերում հանդիպում է *kūč*, *kūfj*, *kufj*, *kūfč*, *kufč*, *qufj*, *qufs* և *qufs* ձևերով: Բառի տարբեր ձևերը ցույց են տալիս, որ *Kūč* էթնիկ անվանումն առաջացել է միջին պարսկերեն *kōf-hg*՝ *-ēč* վերջածանցով: Ըստ *Walter Hinz*-ի՝ *-ēč* (>\**aiča-*) վերջածանցը, որը հանդիպում է նաև այլ տեղանուններում, հոմանիշ է *-ēn*-ին (>\**aina-*), հետևաբար *kōfēč* կնշանակի «լեռնաբնակ»: *Šāhnāma*-ում *Balūč*-ն այն լեռան անունն է, որի բնակիչները կոչվում են *kūfč*, իսկ մեկ այլ տեղում լեռը հիշատակվում է արդեն *burz*՝ «բարձր» (*burz-kūh* «բարձր լեռ») ածականով: Հիմնված *burz-kūh* անվան վրա՝ *balūč* ցեղանվան ստուգաբանություն համար առաջարկվել է նաև հետևյալ տարբերակը. \**brz-aučah-* > \**burzōč* > *bulōč* > *balōč*:

**1.34. Kurd:** *Kurd* տերմինը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հանդիպում է X դարի աշխատություններում: Նշված ժամանակաշրջանում բառը զուրկ էր այսօրվա իմաստից, այսինքն՝ կոնկրետ ժողովուրդ մատնանշող նշանակությունից: Ավելին, այս տերմինը մշտապես վերաբերել է մանր անասունների՝ ոչխարների ու այծերի, ինչպես նաև ուղտերի հովիվներին: Որոշ տեքստերում *kurd* բառով նշել են նաև լեռնաբնակներին կամ անապատաբնակներին: Անկասկած, հեղինակներն օգտագործել են այս բառը՝ մատնացույց անելու համար քաղաքներից և քաղաքային կյանքից հեռու

կենցաղավարություն ունեցողներին: Kurd տերմինն իրանական շատ բարբառներում դեռ օգտագործվում է «հովիվ» և «անասնապահ» իմաստներով: Ատրպատականի և Կասպից ծովից հարավ ընկած տարածաշրջանում kurd բառն այսօր միանշանակ նշանակում է «մանր անասունների հովիվ», մեծ անասունների հովիվներն էլ կոչվում են gâleš:

**1.35. Lagzi/Lakzi/Lazgi/Lazki:** Lagzi-ն ժողովրդի անուն է, որն այսօր հիմնականում բնակվում է Դաղստանում և Ադրբեջանի Հանրապետության հյուսիս-արևելքում: Պարսից գրականության մեջ նրանց մասին վկայություններն ու տեղեկությունները բավական քիչ են: Պարսից դասական գրականության մեջ ցեղանունն առաջին անգամ հանդիպում է XI դարում՝ lagzi-ի ձևով Qatrān Tabrizi-ի մոտ: Qatrān-ից հետո XII դարի բանաստեղծ Falakī Šarvāni-ն այս ցեղին հիշատակել է որպես lazgi:

**1.36. Lūr/Lur:** Lūr ցեղանունն առաջին անգամ հիշատակվում է XII դարում *Masālik va mamālik*-ի պարսկերեն թարգմանության մեջ: Այս ցեղանվան հին ձևը lūr-ն է, բայց առնվազն XIV դարից այն արտասանվում էր որպես lur, ինչը կարելի է տեսնել մի շարք բանաստեղծություններում առկա հանգերից: Այս ժողովրդի սկզբնական հայրենիքը, հավանական է, Խուզիստանն է եղել, իսկ հետո նրանք տարածվել ու տեղափոխվել են նաև այլ վայրեր: Lūr/Lur ցեղանվան ստուգաբանության վերաբերյալ հանդիպում են երկու հիմնական բացատրություն: Համաձայն առաջին տարբերակի՝ lūr (lar) բառը լորերենում նշանակում է «ծառերով լի սար»՝ արտացոլելով ցեղի բնակատեղին: Ըստ երկրորդ տարբերակի՝ Lur ցեղանունը ծագում է նրանց նախահոր անունից:

### 1.37. Lūli → St'ū' Kauli

**1.38. Lūt:** Lūt-ը Պաղեստինի Mu'tafikāt շրջանում ապրող այն ժողովրդի անունն է, որը հայտնի էր զգվելի բարքերով, այդ թվում՝ միասեռականությամբ: Ցեղանվան ծագումը կապվում է նրանց առաջնորդելու համար ընտրված մարգարեի անվան հետ: Lūt-երի պատմությունը հիշատակվում է Ղուրանում, որի միջոցով էլ մուսք է գործել և՛ պարսից դասական գրականություն, և՛ Ղուրանի թարգմանություններն ու մեկնություններ: Lūt-երի պատմությունը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հիշատակվում է X դարում՝ *Tārix-i Bal'amī* գրքում և բազմիցս մեջբերվել է նաև XI-XVI դարերի տեքստերում:

**1.39. Majūs:** Majūs բառն ուղիղ համարժեք է gabr բառին և նշանակում է «գրադաշտական» ու «կրակապաշտ»: Majūs-ն առաջին անգամ հանդիպում է XI դարում գրված *Tafsīr-i Sūrābād*-ում և, ի դեպ,



գործածվել է *gabr* բառի հետ միասին: *Majūs* բառը ծագել է հին պարսկերեն *maguš*-ից (*magu*-ի ուղղական հոլով), որը նշանակում է «մոգ» և Ղուրանում հիշատակված է միայն մեկ անգամ:

**1.40. Mid:** *Mid* բառի ծագումնաբանությունն անհայտ է: Այս ցեղի անունը *zutt*-երի հետ միասին (*jat/kauli*) հանդիպում է միայն *Mujmal al-tavārix va al-qīṣaṣ* (XII դ.) գրքում:

**1.41. Muṣṣul:** *Muṣṣul*-ներն այթայական ցեղերից էին, որոնց տարածքները գտնվում էին ժամանակակից Մոնղոլիայի արևելքում: Նրանք Թեմուչինի (Չինգիզ Խան, մահ. 1227 թ.) գլխավորությամբ ստեղծեցին մի կայսրություն, որը ընդգրկում էր Չինաստանը, Կենտրոնական Ասիան, Ռուսիայի հարավային տափաստանները, Իրանը, Աֆղանստանը և Իրաքը: *Muṣṣul* ցեղնունն առաջին անգամ հիշատակվում է XI դարում *Tārix-i Sīstān* աշխատությունում, իսկ դեպի Իրան մոնղոլների արշավանքներից հետո, այսինքն՝ XIII դարից սկսած, բազմիցս հանդիպում է պարսից տեքստերում:

**1.42. Pahlavī:** *Pahlavī* բառը պարսից դասական գրականության, հատկապես *Šāhnāma*-ի մեջ տարբեր իմաստներ ունի: *Šāhnāma*-ում այս բառը նշանակում է և՛ «պարթևներն լեզու», և՛ «միջին պարսկերեն»: Սասանյանների անկումից հետո պարթևներեն իսպառ մոռացվեց, որից հետո պահլավերենը (միջին պարսկերենը) իր հերթին աստիճանաբար սկսեց զիջել նոր պարսկերենին (*fārsi-i darī*): Այս ընթացքում իրանցիների և մահմեդական գրողների պատկերացումները հին իրանական լեզվի մասին հիմնականում սահմանափակվում էին ոչ թե երկու լեզվի շրջանակներում, այլ մեկ՝ պահլավերենի: Հետագայում պահլավերենը նույնպես վերածվեց մեռած լեզվի, և բացի որոշ գիտնականներից և հոգևորականներից՝ ժողովուրդը չէր կարող հասկանալ այս լեզուն: Ուստի *pahlavī* բառն աստիճանաբար ձերք բերեց «հին» և «իրանական» իմաստները: Այնուհետև այս ածականը փոխարինեց գոյականին՝ օգտագործվելով «իրանական» և «իրանցի» բացարձակ իմաստներով:

**1.43. Pārsi/Fārsi:** *Pārsi/Fārsi* բառը դասական պարսից գրականության մեջ տարբեր իմաստներ ունի: Պարսից տեքստերում *pārsi* բառը հաճախ օգտագործվում է «պարսկերեն լեզու», «պարսկական» և «պարսիկ» իմաստներով: «Պարսիկ/իրանցի» իմաստով այս բառի գործածության առաջին վկայությունը X դարում գրված *Tārix-i Bal'ami*-ի մեջ է և *Šāhnāma*-ում: X դարից սկսած *pārsi* ցեղանունը բազմիցս օգտագործվել է բանաստեղծների ու գրողների կողմից՝ Պարսկաստանի բնակիչներին հիշատակելու համար: Հարկ է նշել, որ V-VII դդ. հայ պատմագրության մեջ պարսիկ ցեղանունը գործածվում է նաև ընդհանուր նշանակությամբ՝

տարածվելով այլ ժողովուրդների վրա: Հայկական պատմագրական երկերում ու հիշատակարաններում «պարսիկ», «պարսից», «ազգն պարսից» եզրույթների ներքո նշվում են նաև սելջուկ-թուրքերը, արաբները, չաղաթայները:

**1.44. Qifčāq/Qifjāq/Qibčāq/Qifjāq:** Այս ցեղանունն առաջին անգամ հանդիպում է XI դարում Nāširi Xusrau-ի բանաստեղծությունների մեջ և *Qabūs-nāma* գրքում՝ qifjāq ձևով: Qifjāq-ները, ինչպես և այլ թյուրքական ցեղերը, հայտնի են եղել ռազմատենչությամբ և միաժամանակ ֆիզիկական գեղեցկությամբ: Այս բառի առաջին վկայությունը qibčāq ձևով հանդիպում է Nizāmi-ի մոտ XII դարում: Qibčāq/Qifčāq ցեղանվան ծագումը պարզ չէ: Որոշ դեպքերում ժողովրդական ստուգաբանության հիման վրա բառի նշանակությունը կապվում է «սնամեջ, դատարկ [ծառ]» իմաստների հետ:

**1.45. Qibt/Qibtī:** Պարսից դասական գրականության մեջ qibt կամ qibtī (Qibt + yā-i nisbat) ցեղանունը կիրառվում է Եգիպտոսի հնագույն բնակիչների նկատմամբ: Այս բառը պարսից գրականություն է մտել արաբերենի և Ղուրանի պատմվածքների միջոցով և X դարից սկսած՝ գործածվում է տարատեսակ պատմություններում ու հատկապես Ղուրանի մեկնություններում: Qibtī բառն առաջացել է արաբերեն al-qubt/al-qibtī-ից (արաբ. հոգն. al-aqbāt), որը նաև հունարեն Αἰγύπτιος բառի աղավաղված ձևն է և վերաբերում է Եգիպտոսի հնագույն բնակիչներին: Այս ցեղանունը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հիշատակվում է X դարում գրված *Tārix-i Bal'amī*-ում և *Tafsīr-i Ṭabari*-ում:

**1.46. Qirqīz/Xirxīz:** Qirqīz/Xirxīz-ը հին Թուրքեստանում այն նահանգի անունն էր, որտեղի եղնիկների մուշկը թաթարական այլ վայրերի մուշկի պես բարձրորակ ու հայտնի էր, և բազմիցս հիշատակվում է պարսից գրականության մեջ: Այս բառն առաջին անգամ Xirxīz ձևով հայտնվել է X դարում Իսմաիլ Բախթիշահի *Hudūd al-‘ālam*-ի աշխարհագրական աշխատությունում: *Hudūd al-‘ālam*-ը և *Zayn al-axbār*-ը միակ պարսկական աղբյուրներն են, որոնց միջոցով կարելի է տեղեկություններ քաղել այդ տարածքների ու դրանցում ապրող ժողովուրդների մասին:

**1.47. Rūmi:** Rūmi-ի իմաստը վերաբերում է հին Հռոմի բնակիչներին: Բայց պետք է նկատել, որ իսլամական ժամանակաշրջանում Rūm-ով սովորաբար նշվում էր Փոքր Ասիայում գտնվող Արևելահռոմեական կայսրությունը՝ Բյուզանդիան: Այս անվանումը դասական պարսից գրականության մեջ առաջին անգամ հայտնվում է X դարում՝ *Tārix-i Bal'amī*-ում: Պարսից գրականության մեջ

Rūmi-ները սպիտակության խորհրդանիշ են, և այս տեսակետից նրանք հակադրվում են *habaši*-ներին և *zangī*-ներին (սևության և խավարի խորհրդանիշներ):

**1.48. Rūs/Rūsi:** Իսլամական աղբյուրներում *rūs* անվանումն առաջին անգամ հանդիպում է IX դարի արաբերեն տեքստերում: Ըստ այդ աղբյուրների՝ *rūs* ժողովուրդն ապրում էր հյուսիսային հողերում և Վոլգա գետի վերին մասում՝ խազարների, սլավոնների ու բուլղարների հարևանությամբ: Պարսից գրականության և իրանական պատմագրության մեջ այս անունը երկակի կիրառություն ունի ու երբեմն վերաբերում է հենց ռուս ազգին, երբեմն էլ՝ այս ազգի տարածքին ու բնակության վայրին: Պարսկերեն աղբյուրներում *rūs* բառն առաջին անգամ հիշատակվում է X դարում՝ *Tārix-nāma-yi Tabarī*-ի մեջ: Պարսից դասական գրականության մեջ ռուսները նկարագրվել են որպես կարմրադեմ և կապույտ աչքերով մարդիկ:

**1.49. šābi:** *šābi*-ները կամ *mandāyī*-ները Հովհաննես Մկրտչի հետևորդներ հանդիսացող էթնիկ-կրոնական փոքրամասնություն են, որոնց մի մասը դեռևս ապրում է Խուզեստան նահանգում և տեղական լեզվով կոչվում է *subbi*: Այս ցեղը Ղուրանում երեք անգամ հիշատակվում է *al-šābi'īn* և *al-šābi'ūn* տարբերակներով: Պարսից դասական գրականության մեջ այս ցեղանունն առաջին անգամ հիշատակվում է X դարում *Hudūd al-'ālam* գրքում: *šābi* բառի իմաստի վերաբերյալ տարբեր տեսակետներ կան, որոնցից մեկի համաձայն *šābi* դառնալը նշանակում է «մի կրոնից մյուս կրոնի անցնել ու դավանափոխ լինել»:

**1.50. Sagsār:** *Sagsār* բառը ցեղանվան իմաստով ընդամենը երկու անգամ է գործածվել պարսից գրականության մեջ. առաջին անգամ՝ *Šāhnāma*-ում (X դ.), ապա *Bahman-nāma*-ում (XI կամ XII դ.): Ամենայն հավանականությամբ այս ցեղանունը կապված է Սկյութների հետ:

**1.51. Sagzi/Sajzi/Sakzi:** *Sagzi* ցեղանունը (նշանակում է *Sistānī* «Սիստանցի») առաջին անգամ հիշատակվել է *Šāhnāma*-ում և նրանում կրկնվել 15 անգամ: *Sagzi*-ն *Šāhnāma*-ում օգտագործվում է Ռոստամին, ապա Սիստանի ժողովրդին հիշատակելու համար: Կառուցվածքային ու ստուգաբանական առումով *sagzi* բառը ծագում է միջին պարսկերեն *sagzīk* (հայերեն՝ Սազճիկ) բառից, որում հստակորեն երևում է *sak* (սկյութ) բաղադրիչը: Այս բառը դասական պարսկերենում ստորացուցիչ նշանակություն է ստացել՝ կապված *sag* «շուն» բառի հետ (*sag+zī* «շան կերպ ապրող»): Այսինքն՝ ժողովրդական ստուգաբանության ազդեցության տակ այն ժամանակի ընթացքում ձեռք է բերել նման իմաստ:

**1.52. Saqlāb/Şaqlāb:** Saqlāb/Şaqlāb ցեղանունն առաջին անգամ հիշատակվում է X դարում *Tārix-nāma-yi Tabarī*-ի մեջ: Այս ցեղանունը որոշ տեքստերում արտասանվում է որպես *şiqāb*, և թվում է, թե այս տառադարձությունն արաբական *al-siqqāb* «շատ ուտող ուղտ» բառի (*uštūr-i bisyār-xvār*) ազդեցության հետևանք է:

**1.53. Šūl:** Šūl-ը Fārs-ում ապրող ցեղերից մեկի անունն էր: Յեղի բնակության վայրը սկզբում Luristān-ն էր: IX դարում նրանք զբաղեցնում էին արդեն Luristān-ի տարածքի մոտ կեսը: Իսլամական շրջանի պատմագրության մեջ այս ցեղի մասին գրեթե ոչ մի լուրջ տեղեկություն չկա՝ բացառությամբ Ibn Battūta-ի այն հաղորդման (1347 թ.), որ այս ժողովրդին նա տեսել է Շիրազից Kāzerūn տանող ճանապարհին: Այս ցեղի անունն առաջին անգամ հիշատակվում է *Vīs u Rāmīn*-ում (XI դար):

**1.54. Tālīs/Ṭālīs:** Այս ցեղանունն առաջին անգամ հանդիպում է XVI դարի այնպիսի տեքստերում, ինչպիսիք են *Tārix-i Uljāyitu*-ն, *Tārix-i Banākati*-ն, *Jāme‘ al-tavārix*-ն և *Şafvat al-şafā*-ն: Հարկ է նշել, որ հին հունական դասական հեղինակների մոտ վկայվող *καδοσσοι* ցեղանվան համարժեքը հայկական աղբյուրներում հանդիպող Կատիշ անունն է համարվում: Այս ժողովրդի անունը՝ կաղաք ձևով, վկայված է *Աշխարհացոյց*ում Կասպից ծովի հարավարևմտյան շրջանների նկարագրության մեջ: Երկու ցեղանունների՝ «Καδοῦς»-ի և «tālīs»-ի կառուցվածքները նման են. դրանք ածանցային ձևեր են՝ *kād-* և *tāl-* հիմքերով: \**Kādus-* ձևով վերջածանցը, հավանաբար, պետք է կարդալ որպես *-uš* կամ *-iš*՝ հաշվի առնելով ցեղանվան ավելի ուշ հայերեն տարբերակը՝ կատիշ (կատշք-ում):

**1.55. Tāzīk/Ṭāzīk/Tājīk/Ṭājīk:** Այս ցեղանունն առաջին անգամ հանդիպում է XI դարում ‘Unsurī Balxī-ի մոտ *tājīk* ձևով և *Tārix-i Bayhaqī*-ի մեջ՝ *tāzīk* ձևով: Նշված տեքստերում նրանք հիշատակվում են Turk ցեղանվան հետ միասին և կիրառվում են «իրանցի» նշանակությամբ: Բայց *Tārix-i Bayhaqī*-ի այլ վկայություններից կարելի է եզրակացնել, որ *tāzīk/ṭājīk* ցեղն օգտագործվել է «ռամիկ, գյուղացի, հողագործ» իմաստներով և՛ «մարտիկ, ռազմիկ» հատկանիշ ունեցող Turk տերմինի կողքին: Այս ցեղանունը կիրառվել է նաև բոլոր իրանցիների նկատմամբ՝ ներառելով և՛ մուսուլմաններին, և՛ ոչ մուսուլմաններին: Այս եզրույթը նշանակում է «օտար», որն իրանցիները կիրառել են արաբների, իսկ թուրքերը՝ իրանցիների նկատմամբ:

**1.56. Tāzi:** *Tāzi* («արաբ») բառը ցեղանվան իմաստով առաջին անգամ հիշատակվում է X դարում *Tārix-i Bal‘amī* գրքում և *Şāhnāma*-ում: *Tāzi* ցեղանունն առաջացել է *tayy* ցեղի անունից (միջին պարսկերեն՝

tāčik (< \*tāičik): Յեղը Իրանի հարևանությամբ ապրող ամենահզոր արաբական ցեղերից էր, որի պատճառով նրա անվանումը տարածվում էր բոլոր արաբների վրա (սիրիերեն՝ tayāte): Այլ կերպ ասած՝ tāzi-ն արաբների նկատմամբ կիրառում էին իրանցիները: Այս ստուգաբանության մեջ -zī մասնիկը միջին պարսկերենի -čik (\*-čika-) վերջածանցի շարունակությունն է, որը պարսկերեն որոշ բառերում հանդես է գալիս որպես պատկանելություն ցույց տվող վերջածանց: Tāzi բառը պարսից դասական տեքստերում օգտագործվում է նաև այլ ձևերով, ինչպիսիք են tāzīk-ը և tājīk-ը: Tāzīk-ը որոշ դեպքերում, օրինակ՝ *Tārix-i Bayhaqī*-ում, օգտագործվում է մուսուլման իրանցիների հիշատակելու համար՝ ի տարբերություն արաբների և թուրքերի:

**1.57. Tarāz/Tirāz:** Tarāz-ը իրականում հին Թուրքեստանի քաղաքներից մեկի անվանումն է, որտեղ մարդիկ հայտնի էին իրենց գեղեցկությամբ: Նրա մասին առաջին անգամ հիշատակվում է X դարում *Hudūd al-‘ālam* գրքում ու *Šāhnāma*-ում: Ընդհանրապես պարսից գրական և պատմական տեքստերում Tarāz-ի թյուրքերի հիշատակումը կապված է բացառապես գեղեցկության հետ:

**1.58. Tātār/Tatār/Tatar:** Tātār-ները Միջին Ասիայի ցեղերից են, որոնց անունը պարսկերեն աղբյուրներում առաջին անգամ հիշատակվել է X դարում *Hudūd al-‘ālam* աշխարհագրական երկասիրությունում: *Hudūd al-‘ālam*-ի հեղինակը tātār-ներին ներկայացրել է որպես Կասպից ծովի խումբ, սակայն Gardēzi-ն *Zayn al-axbār*-ում նրանց համարում է kimāk-ների մի ճյուղ:

**1.59. Turk:** Turk-ը ընդհանուր անուն է տարբեր տոհմերի ու ցեղերի համար, ինչպիսիք են, օրինակ, turkamān-ները, qibčāq-ները, kimāk-ները, xallux-ները, tarāz/tirāz-ները և այլն: Turk ցեղանունն առաջին անգամ հիշատակվում է *Tārix-i Bal‘amī*-ի մեջ (X դ.), այնուհետև պարսից գրականության մեջ բազմիցս կրկնվում է: Անկասկած, ոչ մի ցեղանուն այնքան տարածում չունի պարսից դասական գրականության մեջ, որքան թուրք ցեղանունն է: Թուրքերը պարսից գրականության մեջ եղել են գեղեցկության և ռազմատենչության խորհրդանիշ: Նրանց ծառայեցրել են որպես ստրուկներ, աղախիններ, մատովակներ ու վարձկան մարտիկներ: Պարսից գրականության մեջ երկու՝ turk (այսինքն՝ «ստրուկ») և āzāda (այսինքն՝ «իրանցի») և միաժամանակ «ազատ») բառերի միջև կա հակադրություն:

**1.60. Turkmān/Turkaman:** Այս ցեղանվան առաջին վկայությունը պարսից գրականության մեջ հանդիպում է X դարում turkamān ձևով: Հետագա դարերում այն բազմիցս նույն կերպ վկայվել է տարբեր տեքստերում: Turkaman ձևը (այսինքն՝ turkmān բառի փոխված ձևը) ուշ

շրջանում է առաջացել ու հանդիպում է XV դարի տեքստերում: Այս ցեղանվան ծագումը նունպես անհայտ է, թեև, համաձայն առավել տարածված վարկածի, այն ստուգաբանվում է իբրև Turk ցեղանվան և պարսկերեն նմանություն ցույց տվող վերջածանց *mānand* «նման» բառերի միացումից առաջացած կազմություն, այսինքն՝ «թյուրքի նման», «ինչպես թյուրքը»:

**1.61. Թամւձ:** Թամւձ-ը հին արաբների մի ցեղի անունն է, որը մերժել է իրենց մարգարեի՝ *Sālih*-ի կոչը, և դրա պատճառով ենթարկվել աստվածային պատժի: Թամւձ-ների անունը բազմիցս հանդիպում է Ղուրանում, և նրանք հիշատակվում են որպես բազմաստված ժողովուրդ: Այս ազգի անունը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հիշատակվում է X դարում՝ *Bal'ami*-ի պատմության մեջ (X դ.):

**1.62. Սլւզ/Գւզ:** Գւզ-երը միջինասիական ցեղերից էին, որոնք ներխուժեցին Իրանի սահմաններ XI դարի առաջին կեսից սկսած, ուստի այս ժողովրդի անունն ու նրանց կողոպուտների ու վայրագությունների պատմությունը մանրամասն նկարագրված է պարսից գրականության և իրանական պատմագրության մեջ: Այս ցեղանունն առաջին անգամ օգտագործվել է X դարի բանաստեղծ *Kasā'i Marvazi*-ի պոեզիայում: Իհարկե, այս բառը հիշատակվում է նաև *Šāhnāma*-ում, բայց այն գործածված է տեղանվանական իմաստով և կարծես վերաբերում է տվյալ ցեղի բնակության երկրամասին:

**1.63. Սւիրատ:** *Uvirāt*-ը մոնղոլական ցեղերից մեկն է: Այս ցեղի անունն առաջին անգամ հիշատակվում է XIV դարում՝ *Tārix-i Uljāyitu* և *Jāme' al-tavāriḫ* աշխատությունների մեջ:

**1.64. Սւբակ/Սւզբակ:** Այս անվան ծագման մասին տարբեր կարծիքներ են արտահայտվել: Ոմանք կարծում են, որ այս ցեղանունը բխում է *öz*-ից («սեփական գլխի տեր», «բոլորից առանձին անձ», «անկախ մարդ») և թյուրքական *bek/bey/beg* տիտղոսից, որը նշանակում է «ազնվական», և այսպիսով ձեռք է բերում «նա, ով իր տերն է» իմաստը: Ըստ մեկ այլ տեսության՝ *uzbak*-ն առաջացել է Օղուզ խաքանի անունից, որը հայտնի էր որպես *Uğuz-bek* «Օղուզների առաջնորդ» (*Uğuz-bek* > *uz-bek*): Այս երկրորդ տեսությունն ավելի մոտ է ճշմարտությանը: *Uzbek*-ը ցեղանվան իմաստով առաջին անգամ հանդիպում է *Sīrat-i jalāl al-Dīn Minkubirni* աշխատությունում:

**1.65. Սալայ/Սալաճ/Սալաճ:** *Xalaj*-ները թյուրքական ծագում ունեցող ցեղեր են, որոնք մինչև մոնղոլական դարաշրջանն ապրել են

Թոխարիստանի և Սիստանի միջև ընկած տարածքներում, իսկ դրանից հետո գաղթել են տարբեր շրջաններ, այդ թվում՝ Իրանի կենտրոնական նահանգներ: Այս ցեղանունը պարսից դասական տեքստերում հանդիպում է *xalāj*, XI դարի բանաստեղծ *Mušfiq Balxi*-ի ստեղծագործություններում՝ *xalač*, իսկ *Jāmi' al-tavāriḫ*-ում՝ *qalač* ձևերով: Ուստի այս ցեղանվան հնչյունական փոփոխությունները պետք է լինեն *qalač* > *xalač* > *xalāj*: *Xalāj* անունը պարսից դասական տեքստերում առաջին անգամ հիշատակվում է *Šāhnāma*-ում՝ այն էլ միայն մեկ տեղում:

**1.66. Xalluxi/Xalluxāni:** *Xallux*-ը հին Թուրքեստանի շրջան էր, որի ժողովուրդը հայտնի էր իր գեղեցկությամբ: Այս տարածքում ապրող թուրքերը կոչվում էին *xalluxi* կամ *xalluxāni*: Պարսից դասական գրականության մեջ *xalluxi*-ների մասին հիշատակող առաջին աղբյուրը *Hudūd al-‘ālam*-ն է (X դ.), որն արժեքավոր ազգագրական տեղեկություններ է հաղորդում այդ ցեղի մասին: Այս ցեղանվան հնչյունական փոփոխությունները պետք է լինեն հետևյալը՝ *qarluq* > *qarluy* > *qarlux* > *xarlux* > *xallux*: Հարկ է նշել, որ նշված բոլոր ձևերը վկայություններ ունեն պարսկերեն և արաբերեն տեքստերում, և, հետևաբար, հնարավոր է, որ այս բառի առաջին «x»-ն երկրորդ «x»-ի առնմանության արդյունք է: Թեև երկրորդ «x»-ն նույնպես պիտք է երկրորդական լինի:

**1.67. Xazar/Xazari/Xazarān:** *Xazar*-ը Ալթայական էթնիկ խմբերից մեկի անունն է, որը VI–X դարերում իշխում էր Վոլգա գետի ստորին հոսանքից մինչև Սև ծովի և Հյուսիսային Կովկասի արևելյան ափերի միջև ընկած հարթավայրերը: Պատմաբանների և լեզվաբանների միջև համաձայնություն չկա խազարների ծագման ու նրանց անվան նշանակության, ինչպես նաև այն մասին, թե երբ է այս անունն առաջին անգամ հայտնվել պատմության մեջ: Այս ցեղի ու երկրի անունը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հիշատակվում է X դարում՝ *Šāhnāma*-ում և *Tāriḫ-i Bal‘amī*-ում:

**1.68. Xūz:** *Xūz* կամ *hūz*-ը Խուզեստանի շրջանում ապրող ցեղերից մեկի անունն է եղել: Յեղանունը պարսից դասական գրականության մեջ առաջին անգամ հայտնվում է *Šāhnāma*-ում (X դ.)՝ *xūziyān* ձևով: *Xūz/Xūzi* ցեղանունը, ըստ հույն հեղինակների, վերաբերել է Խուզ երկրամասի բնիկ ժողովրդին: Այսպես, համաձայն Օսիու-ի՝ նրանք

իրենց անունը տվել են նաև Խուզեստան մեծ նահանգին, իսկ ժողովրդի մայրենի լեզուն, հավանական է, գոյատևել է մինչև Սասանյանների ժամանակները:

**1.69. Ya'jūj va Ma'jūj:** Պարսից դասական գրականության մեջ այս անուններն առաջին անգամ հիշատակվել են X դարում՝ *Tārix-nāma-yi Tabarī*-ի և *Šāhnāma*-ի մեջ: *Šāhnāma*-ում այս ցեղի մարդիկ նկարագրվում են որպես կարճահասակ, որոնք լեզուներով ու դեմքով հիշեցրել են սև ուղտ (*hayūn*), ունեցել են կարմիր և արյունոտ աչքեր, վարազի ատամներ, մազոտ մարմին ու փղի ականջներ, իսկ նրանց կանայք ամեն անգամ հազար երեխա են լույս աշխարհ բերել՝ անհնար դարձնելով նրանց թվի հաշվարկը: Այս կերպով *ya'jūj* և *ma'jūj*-ը պարսից գրականության մեջ դարձել է մի կողմից՝ բազմապատիկության, մյուս կողմից՝ բռնակալության խորհրդանիշ:

**1.70. Zang/Zanj/Zangi:** *Zang/Zanj*-ը համանուն ցեղի ու երկրի անունն է, որի ժողովուրդը սևամորթ է եղել: Այս բառն առաջին անգամ *zang* ձևով ու տեղանվան իմաստով հանդիպում է IX դարում *Muḥammad b. Vasīf Sagzī*-ի բանաստեղծության մեջ, իսկ դրանից հետո բազմիցս *zangi* ձևով օգտագործվում է պարսից դասական տեքստերում: *Zangi*-ները սև մաշկի պատճառով պարսից գրականության մեջ սևության խորհրդանիշ են եղել, և այս տեսանկյունից նրանք հակադրության մեջ են գտնվել հռոմեացիների հետ: Նրանք հիմնականում ստրուկներ էին, որի պատճառով շատ դեպքերում *Zangi* բառը կիրառվել է ինչպես «սևամորթ», այնպես էլ «ստրուկ» իմաստներով:

**1.71. Zardhu/i/ašti/Zardušti/Zartušti:** Պարսից դասական գրականության մեջ *zarduh/i/ašti/zardušti* բառը կիրառվում է զրադաշտական կրոնի և նրա հետևորդների նկատմամբ՝ *gabr* ու *maīūs* տերմիններին զուգահեռ: Բառը *zarduh/i/ašti* ձևով առաջին անգամ հիշատակվում է X դարում *Daqiqi*-ի բանաստեղծություններում և *Šāhnāma*-ում, իսկ *zardušti* տարբերակով կարելի է գտնել նաև XI դարի տեքստերում:

**1.72. Zutt/Ĵat/Ĵāt:** *Zutt*-երը կամ *Ĵat*-երը հնդիրանական ծագում ունեցող կիսաքոչվոր էթնիկ-լեզվական տարասեռ խմբերից են: Պատմաբանների մեծամասնության կարծիքով *zutt*-երը Կենտրոնական Ասիայից գաղթել են Հնդկական ենթամայրցամաք 2000 կամ 3000 տարի առաջ: *Zutt* ցեղանունը, որն առաջացել է



պարսկերեն *ĵat/ĵāt* բառից, առաջին անգամ հանդիպում է X դարում *Tārīx-nāma-yi Tabarī* գրքում, իսկ ավելի ուշ *zutt* և *ĵat* ձևերով՝ XI-XIII դարերի տեքստերում, ինչպիսիք են *Tārīx-i Bayhaqī-ūn*, *Tafsir Sūr-ābādī-ūn*, *Zayn al-axbār-ը* ու *Ādāb al-harb va al-šujā'a-ūn*:

## ԳԼՈՒԽ ԻԻ. ՅԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի երկրորդ գլուխը ցեղանունների լեզվական ուսումնասիրությունն է, որտեղ անդրադարձ է կատարվում բառակազմության խնդիրներին ու իմաստաբանությանը: Բաղկացած է երկու ենթապիսից, որոնք էլ ստորաբաժանվում են մանր ենթաբաժինների:

### 2.1. Յեղանունների ուսումնասիրությանը ըստ կառուցվածքի:

Պարսից գրականության մեջ հանդիպող ցեղանունների մեծ մասը պարզ կամ անձանցավոր կառուցվածք ունեն: Օրինակ, էթնիկ խմբերի անունները, ինչպիսիք են *Armanī* կամ *Gurjī*, որոշ տեքստերում դիտվում են որպես *Arman* և *Gurj*, իսկ որոշ տեքստերում՝ *Armanī* և *Gurjī*: Այս անունների պարզ ձևը մեզ հիշեցնում է արաբական տեքստերում դրանց գործածությունը, որոնց վրա, պարսկերենին հարմարեցնելու նպատակով, ավելացվել է *yā-i nisbat* «պատկանելություն ցույց տվող վերջածանց» (օրինակ՝ *arman/armanī*; *gurj/gurjī*; *rūs/rūsī*): Շատ դեպքերում պարզ *zē*՝ ցեղի անունը վերաբերել է այն տարածքին, որտեղ բնակվել է տվյալ ցեղը, թե՛ հակառակը:

Յուրաքանչյուր ցեղանվան համար տեքստերում հայտնված տարբեր ձևերը հիմնականում կրում են պարսկա-արաբական գրի ազդեցությունը: Օրինակ՝ *sagzi* ցեղանունը, այս ձևից բացի, հանդիպում է նաև *sakzi* ու *sajzi* ձևերով: Քանի որ հին ձեռագրերում «g» (گ) և «k» (ک) տառերը գրված էին նույն ձևով, *sajzi*-ն էլ արաբացված բառի ձևն է ու վերջինիս ազդեցության ներքո էլ մտել է պարսկերեն:

### 2.2. Յեղանունների իմաստաբանությունն ըստ կիրառության:

Ինչպես նշվել է յուրաքանչյուր ցեղանվան կապակցությամբ, պարսից դասական գրականության մեջ որոշ ցեղանուններ իմաստային փոխակերպման են ենթարկվել և, սկզբնական իմաստից բացի, այլ նշանակություն են ստացել: Ըստ կիրառության՝ առանձնացվել է ցեղանունների հետևյալ դասակարգումը.

ա. հիմնական կամ էթնիկական նշանակություն,

բ. երկրորդական կամ հավելյալ նշանակություն, այսինքն՝ երկրորդական զարգացման արդյունքում ձեռք բերված անվանական իմաստ: Երկրորդական նշանակությունը կարող է լինել

պատմալեզվական, գաղափարախոսական, խորհրդանշական, կրոնադավանական:

**2.2.1. Պատմալեզվական իմաստափոխություն:** Երբեմն ցեղանունների իմաստային զարգացումը բառի բնական զարգացման արդյունք է: Այսինքն՝ բառերը կարող են երկրորդական նշանակություն ձեռք բերել իմաստի ընդլայնման կամ նեղացման արդյունքում: Օրինակ՝ տեքստերում տեղ գտած վկայությունների վրա հիմնվելով՝ կարելի է եզրակացնել, որ kurd եզրույթը վերաբերում է անապատում բնակվող կամ խաշնարածությամբ զբաղվող մարդկանց ու զուրկ է որևէ էթնիկական իմաստից: Հարկ է նկատել, որ kurd տերմինը իրանական շատ բարբառներում դեռ օգտագործվում է «հովիվ, անասնապահ» իմաստով: Ատրպատականի ու Կասպից ծովի հարավային տարածքներում kurd բառն այսօր միանշանակ նշանակում է «մանր անասունների հովիվ», մեծ անասունների հովիվներն էլ կոչվում են gâleš:

**2.2.2. Գաղափարախոսական իմաստափոխություն:** Երբեմն որոշ բառեր գաղափարախոսության փոփոխության պատճառով, ստուգաբանական նշանակությունից բացի ստանում են նաև էթնիկական նշանակություն: Այսպես, օրինակ, ‘ajam/a’jami բառն ի սկզբանե նշանակել է «համր և լեզվակապ»: Արաբների արշավանքներից հետո իրանցիները, որոնք արաբների կարծիքով զրկված էին պերճախոսությունից, նվաճողների կողմից կոչվեցին ‘ajam, այսինքն՝ «ոչ արաբ» ու նաև «արաբերենին չտիրապետող»: Դարերի ընթացքում այս տերմինն աստիճանապար կիրառվեց նաև բոլոր ոչ արաբ ազգերին հիշատակելիս:

**2.2.3. Խորհրդանշական իմաստափոխություն:** Երբեմն պարսից դասական գրականության մեջ որոշ ցեղանուններ, էթնիկական նշանակությունից բացի, ստացել են նաև խորհրդանշական նշանակություն: Խորհրդանշական իմաստների ձևավորումը կարող է ծագել ժողովրդի արտաքին հատկանիշներից, սովորույթներից ու կենսակերպից: Օրինակ, rōmī ցեղը պարսից գրականության և իրանական պատմագրության մեջ հանդիսացել է սպիտակության ու գեղեցկության խորհրդանիշ: Rōmī-ներն այս իմաստով հակադրվում են ḫabašī-ներին և zangī-ներին (սևության ու խավարի խորհրդանիշներ):

**2.2.4. Կրոնադավանական իմաստափոխություն:** Որոշ դեպքերում շատ ցեղանունների նշանակությունն ընդլայնվել է սոցիալ-պատմական ու կրոնական պատճառներով և կիրառվել որոշակի կրոնական խմբի նկատմամբ: Օրինակ՝ Armani «հայ» ցեղանունը XVII դարի սկզբից, պարսկահայ բնակչության աճով պայմանավորված, իր սկզբնական

իմաստի հետ զուգահեռ, աստիճանաբար ստանում է կրոնադավանական նշանակություն ու վերաբերում է քրիստոնյա ազգաբնակչությանը:

### ԵՃՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ատենախոսությունը ցեղանվանագիտության վերաբերյալ առաջին աշխատությունն է: Ցեղանունները մինչև այժմ չեն արժանացել մասնագիտական հատուկ ուսումնասիրության: Պարսիկ բանասերները ցեղանուններին անդրադարձել են հիմնականում գրական տեքստերի քննության ժամանակ: Ցեղանունների մասին քիչ չեն նաև առանձին հոդվածներ, ինչպիսիք են՝ kurd-երին, kauli-ներին, tazi-ներին ու tadjik-ներին նվիրված ուսումնասիրությունները, սակայն դրանք հատվածական բնույթ են կրում: Այս ատենախոսության մեջ, բացի ցեղանունների ամենահին վկայությունները նշելուց, քննվել են նաև ցեղանունների իմաստաբանության և բառակազմության հարցեր: Ավելին, ներկայացվել են նաև ցեղանունների ուսումնասիրության կարևորագույն աղբյուրները, որոնք ներկայացված են գլուխ I-ում և օգտագործված գրականության ցանկում: Արված աշխատանքի արդյունքը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Ատենախոսությունը գրելու համար նախ IX-XVI դարերի 200 տեքստերի հիման վրա կազմվել է բովանդակության միջուկը, որում վկայությունները դասավորված են ժամանակագրական կարգով: Նման մոտեցումը կարող է օգտագործվել նաև հետագա հետազոտությունների համար:

2. Նշված հիմքով դասավորվել են յուրաքանչյուր ցեղանվան կիրառության հնագույն վկայությունները: Օգտագործված տեքստերի մեծ մասը պարսից պոեզիայի ու արձակի կարևորագույն տեքստերն են, իսկ մյուս մասն ուղղակի կամ անուղղակի ձևավորվել են հիմնական տեքստերի ազդեցության տակ: Ուստի և, կարծում ենք, որ աշխատանքի արդյունքն առանձնապես չի փոխվի տեքստերի շրջանակի ընդլայնմամբ:

3. Քանի որ պարսից պատմական ու աշխարհագրական շատ տեքստեր բխում են արաբական տեքստերից (օրինակ՝ *Hudūd al-‘ālam*, *Zayn al-axbār*), իսկ դրանց մի մասը այդ տեքստերի ուղղակի թարգմանությունն է (օրինակ՝ *Tārīx-i Bal‘amī*, *Masālik va mamālik*)՝ արաբական տեքստերի համանման հետազոտությունը, ապա դրա համեմատությունը ներկա ատենախոսության հետ միանշանակ նոր արդյունքների կհանգեցնի: Այս առումով արաբական տեքստերի ուսումնասիրությունը կլինի հետագա հետազոտության առարկա:

4. Յեղանունների ուսումնասիրության համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում այնպիսի աղբյուրներ, ինչպիսիք են *Šahnāma*-ն ու *Nizāmi*-ի որոշ պոեմներ՝ *Xusrau u Sirin*-ը, *Haft paykar*-ը և *Iskandar-nāma*-ն, առավել ևս, որ այս գրական գրվագործոցների ստեղծման ժամանակ օգտագործվել են մեզ չհասած աղբյուրներ: Ավելի մեծ ուշադրության են արժանի այնպիսի պատմական տեքստեր, ինչպիսիք են *Tārix-i Bayhaqī*-ն, որոշ տեղական տարեգրություններ, ինչպիսիք են *Tārix-i Bayhaq*-ը ու *Tārix-i Sistān*-ը, որոնք գրվել են դրանց հեղինակների դիտարկումների և անձնական տեղեկությունների հիման վրա: Թյուրքական ցեղերի մասին հետազոտության համար, անկասկած, ամենակարևոր աղբյուրներն են *Tārix-i jahāngušāy-i Juvaynī*-ն և *Jāmi'al-tavārix*-ը:

5. Պարսից լեզվում ցեղանունները, ըստ կառուցվածքի, բաժանվում են երկու խմբի՝ պարզ և ածանցավոր: Ածանցավոր ցեղանուններում նկատվում է միայն *yā*-ի *nisbat* վերջածանցը: Այս առումով որոշ էթնոնիմների կառուցվածքը նման է դեմոնիմների (*Demonym*). այսինքն՝ դրանք կազմվում են տեղանուներին *ya*-ի *nisbat* ավելացնելով: Իհարկե, շատ դեպքերում թվում է, թե բառին հավելյալ իմաստ տալու կամ պարսկերեն դարձնելու համար մի շարք ցեղերի անվան վերջում ավելացվել է *ya*-ի *nisbat*, օրինակ՝ *arman* > *armani*, *gurj*>*gurji*: Ուստի պարսկերենում ցեղանունները բարդ կառուցվածք չունեն: Յեղանունների համար տարբեր ձևերի առկայությունը հիմնականում պարսկա-արաբական գրի ազդեցության արդյունք է: Օրինակ՝ *sagzi* ցեղանունը կարելի է տեսնել նաև *sakzi* և *sajzi* ձևերով, քանի որ հին ձեռագրերում «*g*» (گ) և «*k*» (ک) տառերը գրված են նույն ձևով, իսկ *sajzi*-ն էլ բառի արաբականացված ձևն է, որի ազդեցությամբ էլ մտել է պարսկերեն:

6- Որոշ ցեղանուններ իմաստային փոխակերպման են ենթարկվել ու սկզբնական իմաստից բացի՝ այլ նշանակություն են ձեռք բերել: Օրինակ, բացի էթնիկական իմաստից՝ *hindū* ցեղանունը գործածվել է նաև «ստրուկ, նաժիշտ, սևամորթ» իմաստներով, կամ *deylam* բառը ստացել է «պահապան» իմաստը: Յեղանունների մի այլ մասի դեպքում դրանք ի սկզբանե վերաբերել են նրանց կենսակերպին, բնակության վայրին կամ առանձնահատկություններին՝ աստիճանաբար ստանալով էթնիկական նշանակություն: Օրինակ, *kurd* ցեղանունը, օգտագործվելով միայն «հովիվ, անասնապահ, քոչվոր» իմաստներով, հետագայում դարձել է ցեղանուն:

Այսպիսով, շատ ցեղանունների պարագայում կարելի է առանձնացնել ա. հիմնական կամ էթնիկական նշանակություն, բ. երկրորդական կամ հավելյալ նշանակություն, այսինքն՝ երկրորդական զարգացման արդյունքում ձեռք բերած ածականական իմաստ:

Երկրորդական նշանակությունը կարող լինել պատմալեզվական, գաղափարախոսական, խորհրդանշական, կրոնադավանական: Երկրորդային իմաստների ձևավորումը կարող է ծագել ժողովրդի արտաքին հատկանիշներից, սովորույթներից, կրոնական համոզմունքներից և կենսակերպից:

### **Ատենախոսության վերաբերյալ հրատարակվել են՝**

1. Zeyghami, A., «Some Remarks on the Term *Abxāz* in Classical Persian Literature and Historiography», *Iran and the Caucasus*, vol. 26.2, Leiden, 2022, pp. 156-161.

2. Ջեյղամի Ա., «*Armanī* (Հայ) ցեղանունը պարսից դասական գրականության և իրանական պատմագրության մեջ», *Регион и мир*, № 3, pp. 96-97, Ереван, 2022, էջ 357-374:

3. Зейгами, А, «Этноним *Rūs* (русский) в классической персидской литературе и иранской историографии», *CAUCASO-CASPICA*. Труды Института востоковедения РАН, Выпуск VI, Ереван, 2021, сс. 167-170.

4. Zeyghami, A., «*Gēlakūn*. An Armenian Place-name in *Nizāmī's Khosrow u Širīn*», *Iranian Studies in Honour of Adriano V. Rossi*, Part II, Napoli, 2019, pp. 1403-1046.

5. Ջեյղամի, Ա., «Դալյամ ցեղանունն արաբական դասական գրականության մեջ», *Հոդվածների ժողովածու* (Տասներկուերորդ տարեկան գիտաժողով, Հայ-ռուսական համալսարան, 4-9 դեկտեմբերի 2017 թ.), Երևան, 2018 էջ 586-589:

6. Зейгами, А, «Термины “фарс” и “курд” в сочинении ал-Булдан арабского географа Якуби», *CAUCASO-CASPICA*. Труды Института востоковедения РАН, Выпуск II-III, Ереван, 2018., Ереван, 2018, сс. 297-300.

## **ЗЕЙГАМИ АМИР МЕХДИЕВИЧ РАЗВИТИЕ ЗНАЧЕНИЯ ЭТНОНИМОВ В КЛАССИЧЕСКОЙ ПЕРСИДСКОЙ ЛИТЕРАТУРЕ (IX-XVI ВВ.)**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «Древние и новые языки Азии»

Защита состоится ?? июня 2024 г. в 15<sup>00</sup> часов, на заседании специализированного совета КВОН 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

### **РЕЗЮМЕ**

Данная диссертация представляет собой первую попытку системного исследования этнонимов в персидской классической литературе, преимущественно в плане их семантического развития. До сих пор этнонимы профессионально не исследовались и рассматривались иранскими филологами лишь в контексте литературных текстов. Наличие отдельных публикаций по персидской этнонимике в основном положения не меняют.

Автор использовал более 200 первоисточников, располагая упоминания этнонимов в хронологическом порядке. Аналогичным образом были организованы также свидетельства об употреблении каждого этнонима – от самых ранних до наиболее поздних. Большинство использованных текстов представляют собой важные образцы персидской поэзии и прозы. Диссертация состоит из четырех основных разделов: введения, двух глав и заключения.

Первая глава посвящена рассмотрению различных этнонимов, встречающихся в персидских литературных и исторических текстах, написанных между IX и XVI веками. Этнонимы приведены в хронологическом порядке, а также, для удобства, классифицированы в алфавитном порядке. Кроме того, в главе дается культурологический анализ рассматриваемого материала.

Вторая глава диссертации представляет собой лингвистическое исследование этнонимов, включающее анализ словообразования и семантики. В исследовании подробно анализируются этнонимы как со структурной, так и с семантической точек зрения. Таким образом, выявляются два типа семантической характеристики: первичное или этническое значение этнонима, и вторичное, или дополнительное, значение. Последнее может быть историко-лингвистическим, идеологическим, символическим или религиозным.

**1. Историко-лингвистическое изменение значения.** Иногда семантическое развитие слов представляет собой естественный процесс, происходящий за счет смыслового расширения или сужения, приводящего к приобретению вторичных значений.

**2. Идеологическое изменение значения.** Иногда этническое обозначение может приобретать дополнительное значение вследствие изменения идеологии.

**3. Символическое изменение значения.** В классической персидской литературе некоторые этнонимы, помимо прямого значения, указывающего на этническую группу, приобретают

символическое значение. Данное развитие происходит вследствие внешних характеристик, а также обычаев и образа жизни народа.

4. **Религиозное изменение значения.** В некоторых случаях этнонимы приобрели религиозную коннотацию, что является следствием исторических и региональных процессов развития.

В заключении обобщения основные результаты исследования.

**AMIR MEHDI ZEYGHAMI**

**SEMANTIC DEVELOPMENT OF ETHNONYMS IN CLASSICAL PERSIAN LITERATURE (IX-XVI CENTURIES)**

Thesis for the PhD of Philology, speciality 10.02.06 “Ancient and New Languages of Asia”

The defence will be held on ?? June 2024 at 15<sup>00</sup> at the Specialized Council on Linguistics 019 session of HESC RA in the Institute of Language after Hr. Acharyan NAS RA (Address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str. 15).

**SUMMARY**

This dissertation represents the first attempt on a systematic study of ethnonyms in Persian classical literature. Until now, ethnonyms have not been professionally researched and have only been examined by Iranian philologists in the context of literary texts. Although there are a few articles discussing ethnonyms, they lack comprehensive analyses.

The author used more than 200 primary sources, arranging attestations of the ethnonyms chronologically. Similarly, the attestation of each ethnonym was organized from the earliest fixation to the most recent mention. Most of the texts used are important examples of Persian poetry and prose.

The dissertation contains four main sections: an introduction, two chapters, and a conclusion.

The first chapter focuses on examining various ethnonyms found in the Persian literary and historical texts written between the IX and XVI centuries. These ethnonyms are listed chronologically and classified alphabetically for ease of reference. Additionally, the chapter provides a cultural perspective on the material presented.

The second chapter of the dissertation is a linguistic exploration of ethnonyms, which includes an analysis of word formation and semantics. The study provides a detailed examination of ethnonyms from both structural and semantic perspectives, identifying two types of semantic characteristics: primary

or ethnic meaning and secondary or additional meaning, which can be historical-linguistic, ideological, symbolic, or religious.

1. **Historical-linguistic semantic shift.** Occasionally the semantic development of words is a natural process that occurs due to semantic expansion or narrowing, resulting in the acquisition of secondary meaning.

2. **Ideological semantic change.** Sometimes an ethnic designation may take on additional meaning due to a change in ideology.

3. **Symbolic semantic change.** In the classical Persian literature, some ethnonyms, in addition to their direct meaning indicating an ethnic group, acquire symbolic meaning. This happens because of the external characteristics, as well as customs and way of life of the people.

4. **Religious semantic change.** In some cases, ethnonyms have acquired religious connotations, a consequence of historical and religious developments.

The author provides the findings in the *Conclusions*.